Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 400 օրինակ, 28 էջ:
Գրքույկը վաճառքի ենթակա չէ:
Քաղաք Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 373:93/99
ԳՄԴ 74.2+63.3
Ը 391

Կազմողներ՝

ԱՐՏԱՎԱԶԴ ԴԱՐԲԻՆՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ՍԵՎԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, Գնահատման և թեստավորման կենտրոն

ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ - ասիստենտ, ԵՊՀ

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, Կրթության ազգային ինստիտուտ

ԳՈՀԱՐ ՉԱՔԱՐՅԱՆ - Երևանի թիվ 186 դպրոցի ուսուցչուհի

Խմբագիրներ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ԴԱՐԲԻՆՅԱՆ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

Ը 391 Համաշխարհային պատմություն: Միասնական քննության ուղեցույց,-Եր.: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2011. 28էջ:

ԳՄԴ 74.2+63.3

ISBN 978-99941-881-1-6

Գնահատման և թեստավորման կենտրոն,2011թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան.....3

2. Թեստի կառուցվածքը.....4

3. Թեստի բովանդակությունը.....6

4. Բովանդակային դասիչ.....7

5. Բացատրություններ առաջադրանքների
կատարման վերաբերյալ..... 14

6. Թեստային առաջադրանքների նմուշներ ..... .18

7. Պատասխանների ձևաթուղթ.....23

8. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը..... 24

9. Հանձնարարվող գրականություն..... 25

ՆԱԽԱԲԱՆ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ուղեցույցում ներկայացված են քննական առարկայի թեմատիկ-բովանդակային դասիչը, թեստի կառուցվածքը, թեմատիկ-բովանդակային բաշխումն ըստ առաջադրանքների տիպերի, առաջադրանքների կատարման վերաբերյալ բացատրություններ, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը: Դրանք ուղենիշ պիտի ծառայեն շրջանավարտների, դիմորդների, ինչպես նաև թեստեր կազմողների համար:

Սույն ուղեցույցը պարզաբանում է թեստերի բովանդակությունը, առաջադրանքների յուրահատկությունները, ինչպես նաև օգնում հաղթահարելու դրանց լուծման հնարավոր դժվարությունները:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 80 առաջադրանք: Այն կազմված է Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակը պարունակում է 50 առաջադրանք (1-50-րդ), իսկ Բ մակարդակը՝ 30 առաջադրանք (51-80-րդ):

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար քննություն հանձնողների պատրաստվածությունը ստուգվում է Ա և Բ մակարդակներն ընդգրկող միասնական թեստով:

Քննական թեստում առաջադրանքներն ըստ տիպերի դասակարգված են հետևյալ սկզբունքով.

Ա մակարդակում՝

- տարեթվերի իմացություն,
- փաստերի և երևույթների իմացություն,
- պատմական տերմինների և հասկացությունների իմացություն,
- պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն,
- փաստերի հաջորդականության իմացություն,
- աշխատանք սկզբնաղբյուրների հետ,
- համապատասխանեցում:

Բ մակարդակում առաջադրանքների դասակարգումը կատարվել է գրեթե նույն սկզբունքով: Տարբերությունն այն է, որ Ա մակարդակի առաջին երկու տիպի առաջադրանքները փոխարինվել են պատմական փաստերի համադրման և խմբավորման առաջադրանքներով:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համաշխարհային պատմություն, 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Ա. Քոսյան և ուրիշներ, Երևան, 2009:
2. Համաշխարհային պատմություն, 11-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Ռ. Սաֆրաստյան և ուրիշներ, Երևան, 2010:
3. Համաշխարհային պատմություն, 12-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Ա. Նազարյան և ուրիշներ, Երևան, 2011:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված է չորս վանդակ: Առաջադրանքի ճիշտ պատասխանը ձևաթղթում անցկացնելու համար տվյալ համարի առաջադրանքին համապատասխան վանդակում անհրաժեշտ է դնել «**X**» նշանը: Օրինակ՝

9	Ինչպե՞ս էին անվանում Հին Հռոմում իրար դեմ կռվելու համար հատուկ վարժեցված ստրուկներին.

1) նոբիլ
2) դիկտատոր
3) իմպերատոր
4) գլադիատոր



Եթե դիմորդը ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.

սխալ նշում ուղղված տարբերակ



Առաջադրանքների տիպերը ներկայացված են հետևյալ համամասնությամբ.

	Առաջադրանքների տիպերը	Ա մակարդակ	Բ մակարդակ
I.	տարեթվերի իմացություն	12 (1-7, 21-25)	
II.	փաստերի և երևույթների իմացություն	14 (8-14, 26-30, 39-40)	
III.	պատմական տերմինների և հասկացությունների իմացություն	2 (15-16)	6 (54-56, 70-72)
IV.	պատմական իրադարձությունների ու երևույթների պատճառների և հետևանքների իմացություն	4 (31-32, 41-42)	5(57-59, 73-74)
V.	պատմական իրադարձությունների հաջորդականության իմացություն	9 (17-20, 33-34, 43-45)	5 (60-62, 75-76)
VI.	աշխատանք սկզբնաղբյուրների հետ	2 (35-36)	2 (63-64)
VII.	համապատասխանեցում	7 (37-38, 46-50)	6 (65-66, 77-80)
VIII.	պատմական փաստերի համադրում և խմբավորում		6 (51-53, 67-69)

ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեստում ընդգրկված առաջադրանքները կազմվել են հանրակրթական ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Համաշխարհային պատմություն առարկայի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի ծրագրի (հաստատված 2008 թ. ՀՀ ԿԳՆ կողմից) և դրան համապատասխան ստեղծված Համաշխարհային պատմություն (10-րդ դասարան, Երևան, 2009), Համաշխարհային պատմություն (11-րդ դասարան, Երևան, 2010), Համաշխարհային պատմություն (12-րդ դասարան, Երևան, 2011) ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված դասագրքերի ուսումնական նյութի հիման վրա:

Հաշվի առնելով նշված դասագրքերում ընդգրկված նյութի ընդհանուր ծավալը և ելնելով դիմորդների շահերից՝ որոշ թեմաներ չեն ընդգրկվել բովանդակային դասիչում: Փոխարենը թեստային առաջադրանքները կազմելիս օգտագործվել են 11-րդ և 12-րդ դասարանների համար նախատեսված դասագրքերի վերջում զետեղված «Հասկացությունների և եզրերի (տերմինների) բառարանները», նաև 12-րդ դասարանի դասագրքի «Հավելվածներ» բաժնի նյութը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ


2012 թ. Միասնական քննություն
Պատասխանների ձևաթուղթ
Համաշխարհային պատմություն
Ազգանուն
Անուն Հայրանուն
Անձնական համար
Լրացնե՛ք ուշադիր
• Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
• Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
• Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0
1 3
Թեստ №
Ա մասնաբաժին
Դասախոսի համար
Բ մասնաբաժին
Գ մասնաբաժին
Ա մասնաբաժնում ստացված պատասխանների փոխանցում
Բ մասնաբաժնում ստացված պատասխանների փոխանցում
Անբողջ ձևաթղթում վերցված պատասխանների քանակը
Լրացրե՛ք այս նախադասությունը
Ծանոթ եմ՝ քննության կարգին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դիմորդը կարող է թեստ-գրքույկի դատարկ մասերում սևագրություն կատարել: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը, որի ճիշտ լրացումից է նաև կախված դիմորդի քննական միավորը:

4	Սերբիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի առաջ-նորդների հանդիպումը	4	Ռամբույե	4	2001 թ. սեպտեմբերի 11

1.

1	2	3
2	4	1
3	1	2
4	3	4

2.

1	3	2
2	1	4
3	2	3
4	4	4

3.

1	4	1
2	3	4
3	2	2
4	1	3

4.

1	3	4
2	1	3
3	4	2
4	2	1

8) Պատմական փաստերի համադրում և խմբավորում
Նշված պնդումներից ո՞րն է սխալ:
1) Պարսից Կյուրոս II (Կուռաշ) արքան զոհվել է միջինասիական քոչվոր մասսագետների դեմ մղված ճակատամարտում:
2) Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը կապված է Կլիսթենեսի բարեփոխումների հետ:
3) Սպարտան ուներ երկու արքա, որոնք ներկայացնում էին սպարտական երկու հնագույն տոհմեր:
4) Մակեդոնական երկրորդ պատերազմի արդյունքում Մակեդոնիան վերածվեց Հռոմի ենթակա պետության:

Բերված փաստերից ընտրել 4-ը, որոնք վերաբերում են խաչակրաց առաջին և երկրորդ արշավանքներին:
ա) Խաչակրաց առաջին արշավանքը սկսվեց գյուղացիների զանգվածային երթով:
բ) Գերմանացի խաչակիրները թեև գրավեցին Իկոնիա քաղաքը, սակայն Պաղեստին չհասան, քանի որ Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում:
գ) Երկրորդ խաչակրաց արշավանքը գլխավորում էին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ը և Գերմանիայի կայսր Կոնրադ III-ը:
դ) Երուսաղեմի առաջին թագավոր ընտրված Գոդֆրիդ Բուլյոնցին ստացավ «Տիրոջ գերեզմանի պաշտպան» տիտղոսը:
ե) Անգլիայի արքա Ռիչարդ I Առյուծասիրտն Արևելքում ստեղծեց Կիպրոսի թագավորությունը:
զ) Առաջին խաչակրաց արշավանքի հետևանքով Արևելքում ստեղծվեցին Հիվանդախնամների, Տաճարականների և Տևտոնական հոգևոր-ասպետական միաբանությունները:

1) ա, բ, ե, զ
2) բ, գ, դ, ե
3) ա, գ, դ, զ
4) բ, գ, դ, զ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԴԱՍԻՉ

Հին շրջան

Գլուխ Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 1. Արևելքի առաջին պետությունները

Շումերի քաղաք-պետությունները: Պետության կազմավորումը Եգիպտոսում:

Թեմա 2. Համաեգիպտական պետությունը

Հին թագավորություն: Միջին թագավորություն: Ուշ թագավորություն: Նոր թագավորություն:

Թեմա 3. Խեթական պետությունը, Բաբելոնիան և Ասորեստանը Ք. ա. II հազարամյակում

Խեթական պետությունը: Բաբելոնիան: Վաղ Ասորեստանը:

Թեմա 4. Նոր Ասորեստանյան և Նոր Բաբելոնյան տերությունները: Իրանական բարձրավանդակը

Նոր Ասորեստանյան տերությունը: Նոր Բաբելոնյան տերությունը: Աքեմենյան տերությունը:

Գլուխ Բ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 5. Վաղ և դասական շրջանների հունական պոլիսը

Վաղ հունական պոլիսը: Աթենական պոլիսի ձևավորումը. Սոլոն: Կլիսթենեսի բարեփոխումները: Սպարտա:

Թեմա 6. Հունաստանը Ք. ա. V դարում

Հույն-պարսկական պատերազմները: Աթենական պետության ոսկեդարը. Պերիկլես: Պելոպոնեսյան պատերազմները:

Թեմա 7. Հռոմը՝ Միջերկրական ծովի ավազանի գերիշխող

Հռոմը և Կարթագենը:Մակեդոնական երկրորդ պատերազմը: Պատերազմ Սելևկյան պետության դեմ: Մակեդոնիայի և Հունաստանի նվաճումը:

Թեմա 8. Հանրապետությունից կայսրություն

Հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում: Առաջին եռապետությունը: Երկրորդ եռապետությունը:

Գլուխ Գ. ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 9. Գիտությունը

Մաթեմատիկան և աստղագիտությունը: Փիլիսոփայությունը և պատմագիտությունը:

Թեմա 10. Կրոն

Արևելքի կրոնական համակարգերը: Հունահռոմեական աշխարհի կրոնական համակարգը:

Թեմա 11. Արվեստը

Արևելյան երկրներ: Արևմտյան երկրներ:

Գլուխ Դ. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

Թեմա 12. Հելլենիստական աշխարհը

Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից: Աքեմենյան տերության նվաճումը: Հելլենիստական պետությունները: Հելլենիզմ:

Թեմա 13. Հռոմեական կայսրությունը I-V դարերում

Օգոստոսի պրինցիպատը: Վաղ կայսրությունը: Ուշ կայսրությունը: Արևմտյան կայսրության անկումը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Գլուխ Ա. ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

Թեմա 14. Պետությունը վաղ միջնադարում

Թագավորական իշխանության կազմակերպումը: Ֆրանկական թագավորությունը: Սալիական դատաստանագիրքը: Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումները:

Թեմա 15. Պայքար Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար

Կարլոս Մեծի կայսրությունը: Վերդենի դաշնագիրը: Սրբազան հռոմեական կայսրությունը:

Թեմա 16. Քրիստոնեական եկեղեցին վաղ միջնադարում

Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում: Պապականության առաջացումը: Հերետիկոսական շարժումները:

Թեմա 17. Վաղ միջնադարի եվրոպական մշակույթը

Կրթական համակարգը: Պատմագրությունը: Գրականությունը:

Թեմա 18. Բյուզանդիան V-VIII դարերում

Բյուզանդական քաղաքակրթության ձևավորումը: Կայսերական իշխանությունը: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: Արաբա-բյուզանդական հակամարտությունը:

Գլուխ Բ. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Թեմա 19. Խաչակրաց արշավանքները

Արշավանքների պատճառները: Առաջին և երկրորդ արշավանքները: Խաչակրաց երրորդ արշավանքը: Խաչակրաց հաջորդ արշավանքները: Խաչակրաց արշավանքների հետևանքները:

Թեմա 20. Սոցիալական միջավայրի վերակառուցումը դասական միջնադարում

Գյուղատնտեսությունը: Միջնադարյան քաղաքների առաջացումը: Արհեստը և առևտուրը:

Թեմա 21. Դասային միապետության առաջացումը

Ավատատիրական հասարակության դասերի ձևավորման ավարտը: Անգլիական խորհրդարանը: Գլխավոր շտատները Ֆրանսիայում: Ազգային պետությունների ձևավորումը:

Թեմա 22. Դասական միջնադարի մշակույթը: Վաղ Վերածնունդը Իտալիայում

1) Վուդրո Վիլսոնը
2) Ուինսթոն Չերչիլը
3) Բորիս Ելցինը
4) Օտտո ֆոն Բիսմարկը

Բ մակարդակ

Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը:

«ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը»:

1) Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագծից
2) Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ելցինի ելույթից
3) Անկախ Պետությունների Համագործակցության կազմավորման վերաբերյալ պայմանագրից
4) Միխայիլ Գորբաչովի 1991 թ. դեկտեմբերի 25-ին հրապարակած հրաժարականից

Համապատասխանեցում

Ա մակարդակ

Պատմական գործչին համապատասխանեցնել պաշտոնի հետ

1) Սուլլա	ա) Երկրորդ եռապետության անդամ
2) Պերիկլես	բ) Սպարտայի արքա
3) Լեպիդոս	գ) Աթենքի տիրան
4) Լեոնիդաս	դ) Հռոմի դիկտատոր
	ե) Առաջին ստրատեգոս

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ

Բ մակարդակ

Կատարել համապատասխանեցում:

N	Իրադարձությունը	N	Վայրը	N	Տարեթիվը
1	Ահաբեկչական հարձակումը Համաշխարհային առևտրի կենտրոնի վրա	1	Ալմա-Աթա	1	1995 թ. նոյեմբեր
2	ԱՊՀ-ի ձևավորումը	2	Դեյթոն	2	1999 թ. փետրվար-մարտ
3	Կոսովոյի հակամարտող կողմերի միջև բանակցությունները	3	Նյու-Յորք	3	1991 թ. դեկտեմբերի 21

3) բ, գ, դ, ե
4) բ, դ, ե, զ

5) Պատմական իրադարձությունների հաջորդականության իմացություն

Ա մակարդակ

Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Անկարայի ճակատամարտը Լենկ Թեմուրի և թուրքերի զորքերի միջև
բ) Մանազկերտի ճակատամարտը բյուզանդական և սելջուկյան բանակների միջև
գ) քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայում
դ) անգլիական խորհրդարանի հրավիրումը Սիմոն դը Մոնֆորի կողմից

1) գ, բ, դ, ա
2) բ, ա, դ, գ
3) գ, ա, դ, բ
4) ա, դ, բ, գ

Բ մակարդակ

Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը
բ) խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը Մոսկվայում
գ) Մեծ ճգնաժամի սկիզբը
դ) Փարիզի խորհրդաժողովի բացումը
ե) Ադոլֆ Հիտլերի նշանակվելը Գերմանիայի ռայխսկանցլերի պաշտոնում
զ) ճապոնացիների հարձակումը ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի վրա
է) Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը

1) ա, դ, բ, ե, գ, է, զ
2) դ, ա, գ, ե, բ, զ, է
3) գ, դ, ա, բ, ե, զ, է
4) ա, գ, բ, ե, դ, է, զ

6) Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

Ա մակարդակ

Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը. «Դիվանագետն այն անձն է, որ երկու անգամ կմտածի նախքան ոչինչ չասելը»:

Կրթական համակարգը: Սքոլաստիկա: Թովմա Աքվինացի: Վաղ Վերածնունդը Իտալիայում:

Թեմա 23. Բյուզանդիան IX-XV դարերում

Մակեդոնական (Հայկական) վերածնունդը: Չորրորդ խաչակրաց արշավանքը և Բյուզանդիան: Բյուզանդական կայսրության անկումը:

Թեմա 24. Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Ավատատիրական պետության առաջացումը: Ռուսական միասնական պետությունը:

Թեմա 25. Իսլամական քաղաքակրթությունը

Արաբական խալիֆայությունը: Իրանի իսլամացումը: Իսլամական մշակույթը:

Թեմա 26. Քոչվորական քաղաքակրթությունները

Թյուրք-սելջուկները: Մոնղոլական տերությունը: Օսմանյան կայսրությունը:

Գլուխ Գ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

Թեմա 27. Նոր ժամանակի շեմին

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց հետևանքները: Բացարձակ միապետությունը:

Թեմա 28. Նոր Եվրոպայի ծնունդը

Ռեֆորմացիան: Նիդերլանդական հեղափոխությունը: Երեսնամյա պատերազմը:

Թեմա 29. Արևմտյան Եվրոպայի մշակույթը XVI-XVII առաջին կեսին

Գրականությունը: Արվեստը: Առաջին գիտական հեղափոխությունը:

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Գլուխ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII ԴԱՐ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Թեմա 30. Ժողովրդավարության ձևավորման գործընթացը նոր ժամանակներում

Արդյունաբերական հասարակության ընհանուր բնութագիրը: Լուսավորական շարժումը՝ հասարակության արդիականացման գաղափարախոսություն: Սահմանադրական կարգի հաստատման միտումները և գլխավոր արդյունքները:

Թեմա 31. Հասարակական-քաղաքական ուսմունքները և շարժումները

Ազատականությունը՝ լուսավորական շարժման շարունակություն: Պահպանողականության առաջացումը և հասարակական նշանակությունը: Ազգայնականությունը՝ ազգերի ազատագրման գաղափարախոսություն: Աղքատության վերացման ուսմունքները և հասարակական շարժումները:

Թեմա 32. Սահմանադրական կարգերի հաստատման Անգլիայի ուղին

Խորհրդարանական միապետության ստեղծումը XVII-XVIII դարերում: Մեծ Բրիտանիայի հասարակական-քաղաքական կյանքը: Սահմանադրական կարգի ամրապնդումը:

Թեմա 33. Սահմանադրական կարգերի հաստատման Ֆրանսիայի ուղին

Սահմանադրական կարգերի հաստատման սկիզբը: Երկրորդ հանրապետությունը: Երկրորդ կայսրության անկումը և երրորդ հանրապետության առաջացումը: Երրորդ հանրապետության ժողովրդավարացման գործընթացը:

Թեմա 34. Գերմանիայի և Իտալիայի հասարակական-քաղաքական զարգացման առանձնահատկությունները:

Գերմանիայի և Իտալիայի քաղաքական մասնատվածության հաղթահարումը: Գերմանական կայսրությունը՝ սահմանադրական միապետություն: Իտալական պետության և հասարակության արդիականացումը:

Թեմա 35. Ավստրո-Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն

Բազմազգ տերության պատմական ուղին: Ավստրո-Հունգարիայի առաջացումը: Քաղաքական կյանքը:

Թեմա 36. Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին

Ռուսաստանի արդիականացման սկիզբը: Ռուսական քաղաքակրթությունը XIX դարում: Քաղաքակրթական ճգնաժամը:

Թեմա 37. Արդյունաբերական հասարակության ձևավորման ամերիկյան ուղին

Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումը ԱՄՆ-ում: ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կարգերի ժողովրդավարացումը:

Գլուխ Բ. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 38. Օսմանյան կայսրությունը նոր ժամանակներում

Կայսրության դրությունը: Օսմանյան կայսրությունը բարեռորոգումների շրջանում: Օսմանյան կայսրությունը սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք: Օսմանյան կայսրությունը երիտթուրքերի իշխանության շրջանում:

Թեմա 39. Իրանը նոր ժամանակներում

Իրանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին: Բաբիների շարժումը: Անգլո-ռուսական մրցակցությունն Իրանում: 1905-1911թթ. սահմանադրական շարժումը:

Գլուխ Գ. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ

4) Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ա մակարդակ

Ի՞նչ հետևանք ունեցավ 732 թ. Պուատիեի ճակատամարտը:

1) Արաբները նվաճեցին Գալլիան և իսլամը տարածեցին Արևմտյան Եվրոպայում:
2) Մայորդոմ Կարլոս Մարտելն ազատագրեց Իսպանիան՝ այն միացնելով Ֆրանկական թագավորությանը:
3) Կանգնեցվեցին արաբների արշավանքները Արևմտյան Եվրոպա:
4) Արաբներին հաջողվեց ամրապնդվել Հարավային Գալլիայում:

Բ մակարդակ

Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Առաջին աշխարհամարտի պատճառ:

ա) Համաշխարհային տնտեսության առաջացմանը զուգահեռ խիստ սրվեց տարբեր երկրների միջև մրցակցությունը սպառման շուկաների համար:
բ) Խոշոր տերությունները փորձում էին ստեղծել համաշխարհային կառավարություն՝ միավորելով աշխարհի տարբեր երկրներ ու ժողովուրդների:
գ) XX դարի սկզբին բաժանված աշխարհը վերաբաժանելու համար խոշոր տերությունների միջև պայքարը սպառնալի չափեր էր ընդունել՝ արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամին հաղորդելով համաշխարհային բնույթ:
դ) Մեքենայացված արտադրության կոլեկտիվ բնույթը և մարդու անհատականություն լինելու գաղափարի դուրս մղումը հասարակական գիտակցությունից հարցականի տակ դրեց արդյունաբերական քաղաքակրթության գլխավոր արժեքները՝ ժողովրդավարությունը, ազատությունը, քաղաքացիական հասարակության գոյությունը:
ե) Լայնորեն տարածվեցին ապազգային գաղափարները, որոնք հանգեցրին արևմտյան քաղաքակրթության հիմնական նվաճումների ժխտմանը:
զ) XIX դ. վերջին-XX դ. սկզբին ազգայնականությունը վերածեց ազգայնամոլության, ինչն արդարացնում էր հպատակ ժողովուրդների բռնաճնշումները, տարբեր երկրների գաղութային նվաճումները:

1) ա, բ, ե, զ
2) ա, գ, դ, զ

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

1) Տարեթվերի իմացություն

Ե՞րբ է կնքվել հաշտության պայմանագիր պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև:

1) Ք. ա. 479 թ.
2) Ք. ա. 449 թ.
3) Ք. ա. 459 թ.
4) Ք. ա. 469 թ.

2) Փաստերի և երևույթների իմացություն

Ո՞ր փարավոնն է հիմնադրել Եգիպտոսի Նոր թագավորությունը:

1) Թութմոս I-ը
2) Ռամզես II-ը
3) Յահմոս I-ը
4) Էխնաթոնը

3) Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Ա մակարդակ

Ո՞րն է «աքվեդուկ» բառի հայերեն համարժեքը:

1) ջրանցույց
2) հաղթակոթող
3) ջրանցք
4) հաղթակամար

Բ մակարդակ

Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1) ապարտեիդ
2) ցեղասպանություն
3) վերակառուցում
4) համաշխարհայնացում

ա) պետականորեն կազմակերպված ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացում

բ) հասարակական կյանքի փոփոխություն, վերադասավորություն

գ) արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթացը

դ) ռասսայական խտրականության ծայրահեղ դրսևորումներ ունեցող վարչակարգ Հարավաֆրիկյան Հանրապետությունում 1948-1990 թթ.

ե) 1985-1991թթ. ԽՍՀՄ-ում իրականացված վերափոխումների ընդհանրացված անվանումը

Թեմա 40. Նվաճողական պատերազմները XIX դարի վերջին և XX դարի սկզբին

Նոր դարերի պատերազմների բնույթը: Աշխարհի տարածքային բաժանման համար պատերազմները: Բալկանյան ժողովուրդների ազատագրական պատերազմները և Եվրոպան:

Թեմա 41. Առաջին աշխարհամարտի պատճառները և սկիզբը

Արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամը: Առաջին աշխարհամարտի մասնակիցների նպատակները: Պատերազմի սկիզբը և ռազմական գործողությունները 1914-1916 թթ.:

Թեմա 42. Ռուսաստանը և քաղաքակրթական պառակտումը 1917 թվականին

Տնտեսական և ռազմաքաղաքական ճգնաժամի խորացումը: Հեղափոխական մեծ ճգնաժամը Ռուսաստանում:

Թեմա 43. Առաջին աշխարհամարտի ավարտը և հանրագումարները

Խորհրդային Ռուսաստանը և Առաջին աշխարհամարտը: Քառյակ միության պարտությունը: Առաջին աշխարհամարտի հետևանքները:

Թեմա 44. Գեղարվեստական մշակույթը

XVII-XVIII դարերի գեղարվեստական մշակույթը: XIX դարի գեղարվեստական մշակույթի գլխավոր ուղությունները: Գեղարվեստական մշակույթի ճգնաժամը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՃԳՆԱԺԱՄԸ: ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թեմա 45. Առաջին աշխարհամարտի արդյունքների ամփոփումը

Փարիզի խորհրդաժողովը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգը:

Թեմա 46. Ամբողջատիրական վարչակարգերը

Ամբողջատիրության էությունը: Ֆաշիստական վարչակարգը Իտալիայում: Նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում:

Թեմա 47. Արևմտյան ժողովրդավարության երկրները

Ազատականություն: Մեծ Բրիտանիա: Ֆրանսիա: ԱՄՆ:

Թեմա 48. Զարգացած երկրների տնտեսությունը միջպատերազմյան շրջանում

Բարգավաճման ժամանակաշրջանը: Մեծ ճգնաժամը (1929-1933 թթ.): Ճգնաժամից դուրս գալու ուղիները, «Նոր կուրսը»:

Թեմա 49. Սոցիալիզմի խորհրդային տնտեսական մոդելը

Նոր տնտեսական քաղաքականությունը: Պլանային տնտեսությունը: Սոցիալիզմի կառուցման խորհրդային մոդելը:

Թեմա 50. Մերձավոր և Միջին Արևելքի երկրները XX դարի առաջին կեսին

Թուրքիա: Իրան

Թեմա 51. Միջազգային հարաբերությունները Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին

Միջազգային հարաբերությունների ընդհանուր միտումները: Խաղաղասիրական ձեռնարկումների ձախողումը: Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Ազգերի լիգայի ձախողումը, ռազմատենչ խմբավորման ձևավորումը:

Թեմա 52. Երկրորդ համաշխարհային պատերազմը

Պատերազմի պատճառները: Աշխարհամարտի սկիզբը, փուլերը: Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Հակահիտլերյան խմբավորման ստեղծումը: Արմատական բեկումը պատերազմում: Ազատագրում գերմանական ֆաշիզմից: Աշխարհամարտի ավարտը: Պատերազմի հետևանքները և արդյունքները:

Գլուխ Բ. ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Թեմա 53. Սառը պատերազմը

Ուժերի նոր դասավորությունը: Սառը պատերազմի սկիզբը: Արևմտյան և Արևելյան խմբավորումների ձևավորումը

Թեմա 54. Արևմտյան աշխարհի երկրները. ԱՄՆ և Մեծ Բրիտանիա

ԱՄՆ: Մեծ Բրիտանիա:

Թեմա 55. Արևմտյան աշխարհի երկրները. Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա

Ֆրանսիա: Գերմանիա: Իտալիա:

Թեմա 56. Միավորված ազգերի կազմակերպությունը՝ ՄԱԿ: Եվրոպայի միասնացման գործընթացը

ՄԱԿ-ի ստեղծումը: ՄԱԿ-ի կառույցը: Եվրոպայի միասնացումը:

Գլուխ Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Թեմա 57. Նոր աշխարհակարգը

Հետսառըպատերազմյան նոր աշխարհակարգը: Արմատական փոփոխություններ միջազգային հարաբերություններում: Սառը պատերազմի ավարտը և նոր ընկալումները:

Թեմա 58. ԽՍՀՄ-ի փլուզումն ու նորանկախ պետությունների առաջացումը

Վերակառուցման գործընթացը: ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացը: ԽՍՀՄ փլուզման հետևանքները: Համագործակցությունը հետխորհրդային տարածքում:

Թեմա 59. Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրն ու չճանաչված պետությունները

Ազգերի ինքնորոշման գաղափարի ծագումն ու զարգացումը: Ազգերի ինքնորոշման գաղափարը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Չճանաչված կամ ինքնահռչակ պետություններ:

տարբերակ: Իր ստացած պատասխանը համեմատելով դրանց հետ՝ դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը: Ինչ վերաբերում է աղյուսակի տեսքով տրված համապատասխանեցման առաջադրանքներին, ապա հանձնարարությունները կարող են լինել 3 կամ ավելի: Դրանք կարող են լինել իրադարձությունների, տարեթվերի, պատմական գործիչների կամ տեղանունների շարքեր: Առաջադրանքը լուծելու համար դիմորդը, ըստ առաջին շարքի հերթականության կատարում է համապատասխանեցում: Այնուհետև իր ստացած պատասխանները համեմատում է պատասխանի 4 տարբերակների հետ և ընտրում ճիշտ տարբերակը:

- **Պատմական փաստերի համադրում և խմբավորում**

Տրված 6 առաջադրանքները ներկայացված են հարցերի կամ հանձնարարությունների ձևով: Օրինակ՝ ա) «Տրված պնդումներից որն է սխալ (կամ որն է ճիշտ)», բ) «Բերված փաստերից ընտրել ճիշտ պատասխանները, որոնք վերաբերում են որոշակի պատմական իրադարձությունների»: Առաջին դեպքում բերված են մի քանի պնդումներ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը: Երկրորդ դեպքում առաջադրանքն ավելի բարդ է և պահանջում է դիմորդից գիտելիքները համադրելու կարողություն: Առաջադրանքում բերված փաստարկներից դիմորդը պետք է ընտրի ճիշտ պատասխանները: Այնուհետև, դրանք համեմատելով առաջադրանքի վերջում տրված պատասխանի 4 հնարավոր տարբերակի հետ, դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

Տրված 6 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը: Ենթադրենք բերված է 4 (կամ ավելի) տերմին ու հասկացություն, և տրված է դրանց բովանդակության 5 (կամ ավելի) տարբերակ: Դիմորդը նախ որոշում է 4 ճիշտ զույգերը՝ բացառելով բացատրության ավելորդ տարբերակը: Դրանից հետո նա իր պատասխանը համեմատում է առաջադրանքում առաջադրված պատասխանի 4 (կամ ավելի) հնարավոր տարբերակների հետ՝ ընտրելով միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Առաջին աշխարհամարտի պատճառ: Դիմորդն առաջադրանքում տրված 6 փաստարկներից ընտրում է հնարավոր 4 ճիշտ պատասխանները: Այնուհետև, դրանք համեմատելով առաջադրանքում առաջարկված պատասխանի 4 տարբերակների հետ, ընտրում է ճիշտ պատասխանը:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: Դիմորդից պահանջվում է գտնել պատմական իրադարձությունների ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը: Օգտագործելով տարբեր թեմաներից ունեցած իր գիտելիքները՝ դիմորդը, նախ՝ կազմում է շարքի իր տարբերակը: Դրանից հետո, այն համեմատելով առաջադրանքում տրված պատասխանի հնարավոր 4 տարբերակների հետ, ընտրում է միակ ճիշտ պատասխանը:

- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Տրված 2 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞ր փաստաթղթից է վերցված նշված արտահայտությունը: Դիմորդը ծանոթանում է սկզբնաղբյուրից բերված հատվածին, ընտրում պատասխանը, այն համեմատում առաջադրանքում տրված պատասխանի հնարավոր տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Համապատասխանեցում**

Տրված 6 առաջադրանքները ներկայացված են հանձնարարության ձևով: Առաջադրանքները կարող են լինել սյունակների (կամ աղյուսակների) տեսքով: Օրինակ՝ կատարել համապատասխանեցում: Տրված է պատմական 4 (կամ ավելի) անձի անուն (կամ՝ իրադարձություն): Զուգահեռ տրված է հնարավոր պատասխանների սյունակը: Դիմորդը կարող է, օրինակ, սկզբում գտնել երկրորդ սյունակում տրված ավելորդ պատասխանը և, այն բացառելով, կազմել 4 ճիշտ զույգեր պարունակող շարք: Առաջադրանքի վերջում տրված է հնարավոր պատասխանի 4

Գլուխ Դ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Թեմա 60. Մշակույթի զարգացման փուլերն ու միտումները

Մշակույթի զարգացման փուլերը: Հիմնական ուղղությունները: Զանգվածային մշակույթը: Մշակույթի զարգացման միտումները XXI դարի սկզբին:

Թեմա 61. Գեղարվեստական մշակույթը

Գրականությունը: Արվեստը:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միասնական քննության թեստի բոլոր 80 առաջադրանքները կազմված են ճիշտ պատասխանն ընտրելու սկզբունքով, այսինքն՝ տրված չորս պատասխաններից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 միավոր, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0: Բոլոր առաջադրանքներին տրվող միավորների ընդհանուր գումարը կազմում է 20:

Առաջադրանքների պահանջները հիմնականում ձևակերպվում են հարցերի (ա) կամ հանձնարարությունների (բ) ձևով: Օրինակ՝

ա) Ո՞ր փարավոնն է հիմնադրել Եգիպտոսի Նոր թագավորությունը:

բ) Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

Ուղեցույցում ներկայացված են թեստային առաջադրանքների նմուշներ, որոնց կատարման վերաբերյալ հարկ ենք համարում տալ որոշակի բացատրություններ:

Ա մակարդակ (50 առաջադրանք)

- **Տարեթվերի իմացություն**
  Բոլոր 12 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ «Ե՞րբ է կնքվել հաշտության պայմանագիր պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև»:
  Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:
- **Փաստերի և երևույթների իմացություն**
  Բոլոր 14 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ «Ո՞ր փարավոնն է հիմնադրել Եգիպտոսի Նոր թագավորությունը»:
  Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:
- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**
  Տրված 2 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցադրման կամ հանձնարարության ձևով: Օրինակ՝ «Ո՞րն է «աքվեդուկ» բառի հայերեն համարժեքը»:
  Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:
- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ «Ի՞նչ հետևանք ունեցավ 732 թ. Պուատիեի ճակատամարտը»:
Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական իրադարձությունների հաջորդականության իմացություն**
  Տրված 9 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարությունների ձևով: Օրինակ՝ «Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ»:
  Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:
- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**
  Տրված 2 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ «Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը»:
  Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:
- **Համապատասխանեցում**
  Տրված 7 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարությունների ձևով: Օրինակ՝ «Համապատասխանեցնել պատմական գործչի անունը և պաշտոնը»:
  Տրված են չորս պատմական անձի անուն և հնարավոր հինգ տարբերակից կազմված սյունակներ: Դիմորդը կարող է, օրինակ, սկզբում գտնել երկրորդ սյունակում եղած ավելորդ պատասխանը և, այն բացառելով, կազմել չորս ճիշտ զույգերից կազմված շարք: Առաջադրանքի վերջում տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակ: Իր ստացած պատասխանը համեմատելով դրանց հետ՝դիմորդը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

Բ մակարդակ (30 առաջադրանք)

Ի տարբերություն Ա մակարդակի, որտեղ առաջադրանքները պարզ հարցադրումներից ու պահանջներից աստիճանաբար բարդանում են և գերազանցապես պարզ և միջին բարդության հարցեր են, Բ մակարդակի առաջադրանքներն ավելի բարդ են և շրջանավարտից պահանջում են «Համաշխարհային պատմություն» առարկայի խոր իմացություն: Ճիշտ է, Բ մակարդակի առաջադրանքների մեծ մասը կազմված են նույն սկզբունքներով, որոնք կիրառվում են Ա մակարդակում, բայց դրանց պատասխանելու համար պահանջվում են ինչպես ավելի մեծ ծավալի գիտելիքներ, այնպես էլ դրանք համադրելու և տրամաբանելու կարողություն: Ընդ որում, որոշ տիպի առաջադրանքներ աստիճանաբար բարդանում են:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**